

Մուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 189

Օրինապաշտութեան մի շատ աւելի նուրբ կերպը յաճախ բարձրանում է եկեղեցում ժխտականօրէն ազդելով հաւատացեալների սրբագործութեան կեանքը: Այսպէս օրինապաշտութիւնը սովորաբար վերաբերում է այդ հարցերին կամ արարքներին որոնց առթիւ Աստուծոյ Խօսքը բացայայտօրէն չի խօսում՝ պատճառելով որ հաւատացեալները անհամաձայն են ու նոյնիսկ իրարու հետ հաղորդակցութիւնը խզեն այսպէս հարցերի վրայ: Որպէսզի աւելի լաւ հասկանանք օրինապաշտութեան այս կերպի արմատը ու աստուածային ձեւով վարել դրա հետ եկեղեցում մենք նախ պէտք ունենք համառօտաբար նկատի առնել խղճի (խղճմտանքի) նիւթը:

Խղճմտանք – Աստուած տւել է խղճմտանք բոլոր մարդկանց: Թէպէտ Հեթանոսները չստացան Մովսէսի գրաւոր օրէնքը, ինչպէս Հրէաները էին ստացել, սակայն նրանք դեռեւս փորձում էին պահել դրա հիմնական սկզբունքները: Այս վկայում է այն իրականութիւնը որ բոլոր մարդիկ ունեն Աստուծոյ մի ներքին գիտութիւն (Հռովմայեցիս 1:19, 21, 2:14-15): Որպէս Իր ընդհանուր յայտնութեան մաս Աստուած ցանել է Իր եւ Իր բարոյական օրէնքի որոշ բնածին գիտելիքը բոլոր մարդկանց մէջ: Մրա հիման վրայ մարդու խիղճն վարում է որպէս մի գոլշացնող կամ ահագանգի գործիք՝ որը դատում է մարդու արարքը որպէս թէ ճիշտ կամ թէ սխալ: Ուստի մենք կարող ենք ասել որ խիղճը Աստուծոյ ձայնն է հոգու մէջ:

Ինչպէս մարդու բոլոր մասերը, խիղճն էլ խստիւ պղծւած ու կոտորւած է ընկած մարդումը. եւ թէպէտ Աստուծոյ ու Նրա օրէնքի ընդհանուր գիտելիքը բացայայտ է բոլորին, սակայն ընկած մարդը ձգտում է ճնշել ու խափանել դրա ազդեցութիւնը: Եւ ինչքան աւելի մեղաւորը մեղանչի այնքան աւելի նա լռեցնում ու ի վերջոյ տաղում է (այրում է) իր խիղճը, եւ նրա սիրտը դառնում է աւելի յամառ (կոպիտ) Աստուծոյ դէմ՝ կոչելով չարին բարի ու բարիին չար (Մաղմոս 81:10-12, Եսայիա 5:20, Ա. Տիմոթէոս 4:2, Տիտոս 1:15):

Նրանք որոնք Աստուծոյ վերածնել ու փրկանաւորել են ստացել են Նրանից նորոգւած մտքեր ու արթնացած խղճմտանքներ, որոնք այժմ ունեն ցանկութիւնը անելու այն ինչը որը բարի է ու Աստուծուն փառք է բերում: Սակայն, շատ կարեւոր է մեզի համար պաշտպանել ու պատշաճ կերպով տեղեկացնել մեր խղճմտանքները, քանի որ նրանք դեռ կարող են մեղքի ու սխալ վարդապետութիւնների պատճառով տկարանալ՝ դատապարտելով մեզ մի բանի համար որ Աստուծոյ Խօսքը չի դատապարտում, կամ գովաբանելով մեզ մի բանի համար որ Աստուծոյ Խօսքը չի գովաբանում: Խղճմտանքը պիտի տեղեկացի ու ամրապնդի Աստուծոյ Խօսքովը որպէսզի դատի աստուածաշնչայինօրէն (Առակաց 28:14, Ա. Տիմոթէոս 1:18-19): Ուստի, ինչքան աւելի աճենք մեր Աստուծոյ Խօսքի գիտութեանը մէջ այնքան աւելի այդ կ'տեղեկացնի ու կ'կազմի մեր խղճմտանքը՝ թոյլ տալով դրան աշխատելու պատշաճաբար, առաջնորդելով մեզ որպէսզի կայացնել որոշումներ որոնք հաճելի են Աստուծուն: Մի դասական ու կարեւոր օրինակ տկար եւ զօրաւոր խղճմտանք ունեցող Քրիստոնէաների միջեւ եղած անհամաձայնութիւնների նկատմամբ գտնում ենք Հռովմայեցիս 14ում:

Անտարբեր բաներ – Այս գլխում Պօղոսը խօսում է բարոյականապէս անտարբեր հարցերի մասին (adiaphora), ուր չկայ ոչինչ բնականօրէն ճիշտ կամ սխալ դրանց մասին: Միայն ուտելը կամ որոշ օրերի պահումը, ու նման հարցեր, ոչ էական կամ չնչին հարցեր են՝ բաներ որոնք իրենք իրենց բարոյականապէս անտարբեր կամ չէզոք են, որոնց նկատմամբ Քրիստոնէաներն չպիտի վիճաբանեն կամ բաժանեն: Նաեւ, այս գլխի ընթացքում Պօղոսը խօսում է զօրաւոր կամ հասուն հաւատացեալների մասին, ու նաեւ տկար կամ տհաս հաւատացեալների մասին: Զօրաւոր Հրէայ Քրիստոնէաները նրանք էին որոնք հասկացել էին թէ միայն ինքնիրեն անմաքուր չէր, թէ Հին Ուխտի սննդական օրէնքները իրականացնել էին Քրիստոսում եւ այլեւս պարտաւորիչ (հարկաւոր) չէին, եւ ուստի ճիշտ գիտակցելով իրենց ազատութիւնը ի Քրիստոս նրանք ազատօրէն միա էին ուտում (Մարկոս 7:15-19, Գործք Առաքելոց 10:13-15, Ա. Տիմոթէոս 4:4-5): Իսկ զօրաւոր Հեթանոս Քրիստոնէաները նրանք էին որոնք գիտակցել էին որ կայ միայն մէկ Աստուած, եւ կուռքերը ոչինչ են, եւ ուստի ճիշտ գիտակցելով իրենց ազատութիւնը ի Քրիստոս նրանք ազատօրէն միա էին ուտում (Ա. Կորնթացիս 8:4-6): Տկար Քրիստոնէաները (Հրէաներն ու Հեթանոսները) խնդիրներ ունին այս նիւթերի վերաբերեալ: Այս տարբերութիւնների պատճառով, հաւատացեալները դատում, նոյնիսկ արհամարհում էին մէկը միսին, եւ հետեւաբար վտանգում էին եկեղեցու միաբանութիւնը: Պօղոսը մեղադրում է երկու խմբերին էլ քանի որ Աստուծոյ առջեւ նրանք բոլորը ընդունուած էին (համարներ 3-4):

Քրիստոնէական ազատութիւն – Այսպէս բարոյականապէս անտարբեր հարցերի նկատմամբ, Պօղոսը ասում է որ Աստուած ազատ է թողել մեզ անել ու վարել ըստ մեր միտքը, կամ խիղճը՝ որը ինչպէս ասեցինք քիչ առաջ պէտք է տեղեկացի Աստուծոյ Խօսքից որպէսզի կայացնի ուղիղ որոշումներ, եւ ուղիղ շարժառիթների համար (համարներ 5-6): Դանձեալ նշում ենք որ Պօղոսը այստեղ չի ակնարկում Աստուածաշնչի էական կամ բացայայտ ուսուցումները, որոնց մասին ոչ մի զիջում թոյլատրուած է:

Պօղոսը ասում է որ մենք չենք պատկանում մեզի այլ Աստուծուն. Նա է մեր Տէրն ու Դատաւորը, եւ ուստի կ'դատի մեզ կատարելապէս: Ուրեմն հարկ է մեզ բոլոր այսպէս հարցերում ուր Աստուած լուռ է որ ետ պահել մեր հաւատակիցների դատումը, քանի որ այդ մեր գործը չի այլ Աստուծոյ: Նրա դատաստանն է որը միակ կարեւոր է (համարներ 7-13):